

1. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՄԱՍԻՆ

Արդի աշխարհում ցանկացած երկիր, անկախ իր հասարակարգի և մասնավորապես տնտեսակարգի առանձնահատկություններից, պարբերաբար պետք է անցկացնի մարդահամարներ: Այդ մասին ամրագրված է նաև ՄԱԿ-ի համապատասխան հանձնարարականներում:

Մարդահամարները բարդ վիճակագրական աշխատանքներ են, որոնց իրականացումը կապված է մեթոդաբանական և կազմակերպչական բազմաթիվ հարցերի, մարդահամարային անձնակազմի զգալի թվաքանակի ներգրավման հետ: Դրա համար, ըստ նախօրոք մշակված պլանի, յուրաքանչյուր մարդահամարի անցկացմանը նախորդում է մանրակրկիտ նախապատրաստում:

Ցանկացած երկրի համար մարդահամարների անցկացումն ունի սոցիալական, ժողովրդագրական, տնտեսական, իսկ նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար նաև քաղաքական մեծ նշանակություն:

Մարդահամարները հնարավորություն են տալիս մանրամասն տվյալներ ստանալ բնակչության թվաքանակի, նրա տեղաբաշխվածության, սեռատարիքային կազմի, ամուսնական վիճակի, կրթական մակարդակի, ազգության, գոյության միջոցների աղբյուրների, զբաղվածության, տնային տնտեսությունների բնակության պայմանների և այլ բնութագրերի վերաբերյալ: Բնակչության վերաբերյալ ստացված բազմաբնույթ տեղեկությունները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու տվյալ երկրի հասարակական ու տնտեսական զարգացման մակարդակը և կանխորոշելու հետագա առաջընթացի նոր ուղղություններն ու սկզբունքները:

Ժողովրդագրական ցուցանիշների դինամիկան ունենալու համար՝ մարդահամարները սովորաբար անցկացվում են պարբերաբար՝ ժամանակի հավասար միջակայքերում, որպես կանոն, տասը տարին մեկ անգամ, իսկ մի շարք երկրներում՝ նույնիսկ հինգ տարին մեկ:

Տնտեսական և քաղաքական կարևորությամբ, ծրագրային համընդհանրությամբ առանձնանում էր 2005 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացված մարդահամարը: Ամենից առաջ այդ մարդահամարը Լեռնային Ղարաբաղի անկախության պայմաններում անցկացված առաջին մարդահամարն էր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար առաջին մարդահամարի անցկացումը ժամանակի հրամայական էր: Նախ՝ խախտվել էր տասը տարին մեկ անցկացվող մարդահամարների հաջորդականությունը, միաժամանակ ղարաբաղյան հակամարտության հետևանքով առաջացել էին մեծ միգրացիոն տեղաշարժեր: Հետո էլ՝ ազատական տնտեսակարգին անցնելու շրջանում Լեռնային Ղարաբաղում տեղի էին ունեցել քաղաքական, տնտեսական և սոցիալական խորը վերափոխումներ և այդ գործընթացները վերլուծելու, գնահատելու և կառավարելու համար պահանջվում էր ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն բնակչության թվաքանակի, աշխարհագրական տեղաբաշխման, նրա սոցիալ-ժողովրդագրական, զբաղվածության, տնային տնտեսությունների բնակչության պայմանների և այլ բնութագրերի վերաբերյալ: Իսկ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական կտրվածքներով ու հատկանիշներով ամբողջական տեղեկություններ ստացվում են միայն մարդահամարների անցկացման արդյունքում:

Մարդահամարի իրավական դաշտն ապահովելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2001թ. նոյեմբերի 30-ին ընդունվեց «Մարդահամարի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, համաձայն որի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մարդահամարի անցկացման ժամկետը սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը 2004թ. նոյեմբերի 16-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005 թվականին մարդահամար անցկացնելու մասին» թիվ 451 որոշմամբ առաջին մարդահամարի անցկացման ժամկետը սահմանեց 2005թ. հոկտեմբերի 18-27-ը ներառյալ, իսկ դրան նախորդող փորձնական մարդահամարի անցկացման ժամկետը՝ 2005թ. մարտի 21-30-ը ներառյալ: Փորձնական մարդահամարն անցկացվեց Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի շրջանի Նորագյուղ և Մարտակերտի շրջանի Ներքին Հռոթաղ գյուղերում՝ ընդգրկելով հանրապետության բնակչության (ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական) ոչ պակաս, քան մեկ տոկոսը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մարդահամարը մեր երկրի պատմության մեջ անկախության պայմաններում անցկացված առաջին մարդահամարն էր, որը, որպես բնակչության մասին ճշգրիտ և հավաստի տեղեկությունների հիմնական աղբյուր, հնարավորություն տվեց ստանալ բնակչության մասին մանրամասն տվյալներ հանրապետության, շրջանների և բնակավայրերի մակարդակով:

Խորհրդային տարիներին նախկին Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում 1923-1991թթ. անց է կացվել 6 մարդահամար:

Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության թվաքանակի դինամիկան ըստ ազգության՝ մարդահամարների արդյունքներով

(հազ. մարդ)

	Մարդահամարների անցկացման տարիները					
	17.12.1926	17.01.1939	15.01.1959	15.01.1970	17.01.1979	12.01.1989
Ընդամենը	125.3	150.8	130.4	150.3	162.2	189.1
<i>այդ թվում՝</i>						
Հայեր	111.7	132.8	110.1	121.1	123.1	145.5
Ադրբեջանցիներ	12.6	14.1	18.0	27.2	37.3	40.7
Ռուսներ	0.6	3.2	1.8	1.3	1.2	1.9
Այլ	0.4	0.7	0.5	0.7	0.6	1.0
<i>Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ</i>						
Հայեր	89.1	88.1	84.4	80.6	75.9	76.9
Ադրբեջանցիներ	10.1	9.4	13.8	18.1	23.0	21.5
Ռուսներ	0.5	2.1	1.4	0.9	0.7	1.0
Այլ	0.3	0.5	0.4	0.5	0.4	0.5